
ԴԱՐՁՎԱԾՍՅՒՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԹՂԹԵՐՈՒՄ

ԱՆՆԱ ԱԲԱԶՅԱՆ, ԱՆԱՀԻՏ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ

Դավանաբանական թղթերը հիմնականում ուղղված են նեստորականության և քաղկեդոնականության դեմ («հերձուածողք»), որոնք ժխտում էին Քրիստոսի աստվածային ծնունդը՝ դառնալով հույժ վտանգավոր քրիստոնեական վարդապետության համար: Թղթերում քրիստոնեության իբրև ճշմարիտ հավատի քարոզչությունը կատարվում է հիմնավոր և խորքային, որպեսզի ընթերցողը ըմբռնի այլակարծիք մոտեցման՝ աղանդի հիմնավորումների անհիմնությունը:

Մենք ուսումնասիրել ենք «Մատենագիրք Հայոց» մատենաշարի Գ հատորում¹ գետեղված բոլոր թղթերը, ինչպես նաև «Վկայաբանութիւն սրբոյն Յիզոիբուզտեայ» և «Յովհաննու Հայոց կաթողիկոսի ի յայտնութիւն Քրիստոսի» գործերում տեղ գտած բոլոր դարձվածային միավորները (այսուհետև նաև ԴՄ)²:

Հարկ է նշել, որ թղթերն ունեն ոչ միայն դավանաբանական, այլև պատմական արժեք: Դրանցում ակնհայտ է բովանդակային երկու ուղղվածություն.

1. Քրիստոնեական վարդապետության ճշգրիտ, հասկանալի և հիմնավոր մեկնություն, որը պիտի լինի համոզիչ յուրաքանչյուր քրիստոնյայի համար, քանի որ հակառակորդները («չարաթոյն և չարահնար քարոզ հերձուածողաց»), գործում են նրբորեն, ինչը կարող է ցանկացած պահի վտանգ սպառնալ հայ, աղվանից և հռոմեական եկեղեցիներին:

2. Յույց տալ նեստորականության և քաղկեդոնականության ուղղակի կապը, «քանզի առաջնորդք ժողովոյն աղանդակիցք Նեստորի էին» (Էջ 478)³:

Թղթերում շարադրանքը կատարվում է հակաճառության մեթոդով, որի միջոցով ավելի հասկանալի է դառնում Նեստորի գաղափարների անհիմն և վտանգավոր լինելը:

Թղթերը պաշտոնական ուղերձ-նամակներ են, որոնք ունեն որոշակի կառուցվածք. սկզբում հիշատակվում են այն մարդկանց անունները, որոնց ուղղված է թուղթը: Հաճախ դրանք ուղեկցվում են նրանց մեծարող արտահայտություններով, որոնք մենք արժևորել ենք իբրև

¹ Տե՛ս «Մատենագիրք Հայոց», հ. Գ, Անթիլիաս-Լիբանան, 2004:

² Սյս հատորից հղումները կտրվեն տեքստում՝ փակագծերի մեջ նշելով էջը:

³ Նույն տեղում:

ԴՄ-ներ, օրինակ՝ «Իգնատիոս, որ առաքելոցն **տունկ բարեպտուղ**, Աթանասիոս **ճառագայթ լուսոյ** աշխարհի եւ Յովիոս՝ զարեւմտացն ճանապարհին **կենաց առաջնորդ**» (էջ 123):

Թուղթն ավարտվում է ողջության մաղթանքով՝ *ն՛ղջ լեր կամ լիջիր, ն՛ղջ լերուք կամ լիջիք*:

Թղթերի՝ իբրև պաշտոնական ոճի առանձին միավորների լեզվի բազմակողմանի վերլուծությունը, դրանցում գործածված դարձվածքների իմաստագործառական և ոճական հատկանիշները արժևորվում են առաջին անգամ ոչ միայն գրաբարի դարձվածաբանության, այլև գրաբար պաշտոնական երկի լեզվի գնահատման առումով: Քրիստոնեական վարդապետության ամրապնդումը միշտ կարևորվել է, քանի որ աղանդները, որ այսօր ևս լուրջ վտանգ են ներկայացնում, բազմաբնույթ են ու բազմաբովանդակ: Նրանց դեմ պայքարը հետևողականություն և քրիստոնեական վարդապետության ճշգրիտ իմացություն է պահանջում:

Որպեսզի հասկանալի լինի մեր ուսումնասիրած բնագրերի բովանդակությունը, նրանց ոչ միայն դավանաբանական, այլև պատմական արժեքը և ըստ այդմ՝ խնդրո առարկա դարձվածային միավորների գործածությունը դրանցում, նպատակահարմար ենք գտնում դրանք քննել ըստ առանձին հեղինակների՝ հիմք ընդունելով թղթերի բովանդակության ընդհանրությունը:

ԴՄ-ները թղթերում գերազանցապես տեքստային են, այսինքն՝ նրանց գործառույթը և ոճական արժևորումը գնահատելի են դառնում սովյալ թղթում կամ բովանդակային ընդհանրությամբ թղթերում: Դիտարկենք ԴՄ-ները կաթողիկոսների թղթերում (VI-VII դդ.):

1. *Բարկեն կաթողիկոս Ոթմսեցի*. աթոռակալել է 490-516 թթ.: Նա անառարկելիորեն մերժում է նեստորականությունը և քաղկեդոնականությունը: Նրա անունով վկայված են «Թուղթք երկուք» ուղղված «Պարսկաստանի «ուղղահաւաստ» քրիստոնյաներին՝ Սաորի միաբնակ եկեղեցուն» (էջ 115):

Թղթերից առաջինը՝ «Ի Բարգենայ ի Հայոց եպիսկոպոսապետէ եւ ի նորին աթոռակցաց», ժողովական է՝ շարադրված Դվինի ժողովի մասնակիցների կողմից: Երկրորդը, որ գրվել է 507-508 թթ., հեղինակին է, որը նախորդ թղթի գաղափարական շարունակությունն ու ամրակայումն է: Երկու թղթերում հիմնավորվում է նեստորականների և քաղկեդոնականների գաղափարական ու դավանաբանական ընդհանրությունը՝ ընդգծելով հայոց եկեղեցու կոշտ վերաբերմունքը Քրիստոսի ճշմարիտ վարդապետությունից ցանկացած շեղման և այլակարծության նկատմամբ:

Թղթերում կոչ է արվում զգուշանալ և հեռու մնալ «ի հերձուածողաց»: Դրանցում հերքվում է Նեստորի մուլար գաղափարախոսության հիմնաքարը համարվող այն միտքը, որ Հայր Աստված ունեցել է երկու որդի՝ «Աստուած Բանն հաւասար Հայր» և Հիսուսը՝ «Մարդ մահկանացու՝ նման մեր»: Այնինչ Հիսուսն ունի աստվածային ծնունդ և «որդին է Աստուծոյ»:

Շարադրանքը կատարվում է տրամաբանական հիմնավորումով,

կարևորվում է քրիստոնեության ճշգրիտ մեկնությունը հակընդդեմ Նեստորի յուրաքանչյուր սխալ և թյուր մտքի:

Թղթերում դարձվածքներն արտահայտում են **«զմիտս առաքինի մշակաց»** Քրիստոսի և **«զմիտս գայլոց՝ զգեստուք գառանց»**, որոնք այնքան վտանգավոր են, որ մտնում են **«ի տունս հաւատացելոց»**՝ իրենց «չարաթոյն» մտքերը իրական ցուցանելով: Երկու թղթերում էլ հեղինակը փառքով է հիշատակում **«զեպիսկոպոսս ի Նիկիա և յԵփեսոս»**, որոնց անվանում է **«նահատակք ճշմարտութեան»** (էջ 123):

Դարձվածքները, որոնք օժտված են ներազդելու մեծ ուժով, «խոսքի անգուգական արտահայտությունն են. դրանց սեղմությունը պայմանավորող հիմնական հանգամանքը բառը ընդհանրացման մեծ ուժով օգտագործելն է, որտեղ «հասարակ» բառերը հանդես են գալիս որպես խոր բովանդակության կրողներ...»⁴:

Դարձվածքների արժևորումը և սահմանումը միանշանակ չեն⁵: Մենք դարձվածքի կարևոր հատկանիշ ենք համարում կայուն կապակցության մեջ առնվազն մեկ բաղադրիչի փոխաբերական իմաստով գործածությունը: Օրինակ՝ **վրիպեցուցանել ի ճանապարհէ** կապակցության մեջ *ճանապարհ* բառն ունի փոխաբերական իմաստ. կապակցությունն արտահայտում է *քրիստոնեական վարդապետությունից մոլորեցնել* իմաստը: «Կոյր» բառի հավելումով, որը դավաբանական կապակցություններում ունի *անտեղյակ* իմաստը, ձևավորվում է **«վրիպեցուցանել ի ճանապարհէ զկոյրս»** ԴՄ-ն՝ *մոլորեցնել Քրիստոսի մասին ճշգրիտ ուսմունքին անտեղյակներին* իմաստով: Այն ունի նաև *ճանապարհից շեղել, մոլորեցնել, խաբել* իմաստը արդի հայերենում և գործածվում է ընդհանրական (ոչ միայն դավանաբանական) իմաստով: **Դուռն ողորմութեան, տուն Աստուծոյ, մշակք առաքինի, բարի նախանձ, դուստր Քրիստոսի** և այլ միավորները, որոնք տարածված են, որոշ լեզվաբանների մոտեցմամբ բաղադրյալ անուններ են և ոչ թե դարձվածքներ⁶:

Դարձվածքների ի հարկի գործածությունը թղթերում առանձնակի ուժ է տալիս խոսքին:

Նեստորի գաղափարախոսությունը բնորոշվում է իբրև **«դառն հայեցողութիւն»** (էջ 119), որ նպատակ ունի **«պատրել ի մոլորութիւն զմիտս անմեղաց, որ է տգիտաց, վրիպեցուցանելով ի ճանապարհէ զկոյրս, որով սահմանեցաւ ի Սրբոյ Հոգւոյն մարգարէին»** (էջ 122):

Վրիպեցուցանել ի ճանապարհէ ԴՄ-ն հոմանիշ է **կուրացուցանել զմիտս** դարձվածքին: Բնագրային օրինակ՝ «Աստուած աշխարհիս այսորիկ ըստ ասացելումն, կորացոյց զմիտս նոցա, զի մի ծագեցէ ի նոսա լու-

⁴ Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 193:

⁵ Մանրամասն տե՛ս **Խ. Բաղիկյան**, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, էջ 15-48:

⁶ Տե՛ս **Պ. Բեդիրյան**, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն կապակցությունները, Եր., 1990, էջ 20-23:

սաւորութիւն փրկչին արարածոց, զոր յամենայն ժամ ընթերցեալ» (էջ 123):

Մոլորեցնել իմաստով է գործածված նաև **պատրել ի մոլորութիւն** կապակցությունը, որը կազմված է նույնիմաստ բառերի համադրմամբ (*պատրել* նշանակում է *խաբել, մոլորեցնել*):

Իմաստի սաստկացման նպատակով գրաբարով մատենագրության մեջ հաճախադեպ են հոմանիշ կամ նույնանիշ բաղադրիչներով կապակցությունները:

Այսպես է կազմված նաև **«նախանձ խանտանաց»** ԴՄ-ն, որը վկայված չէ ԳԴԲ-ում⁷ և ունի տեքստային առկայացում: «Որպէս սովորեաց **նախանձ խանտանաց** ի մարդկան յաստուածայնիցն բարեացն» (էջ 122). *խանտանք* (խանդանք) նշանակում է նախանձ, իսկ նախանձն ունի *չարիք* նշանակությունը (ԳԲԲ, էջ 262): **Նախանձ խանտանաց** (չարիքների չարիք) կապակցությամբ բնորոշվում է նետտրականությունը:

Նախանձ բառը հանդիպում է նաև *բարի* բաղադրիչի հետ (այն իր գործառույթը պահպանում է այսօր ևս): Օրինակ՝ «... **զբարի նախանձ** նախանձեցայք եւ զերանելի եւ զցանկալի կեանս անձանց ընտրեցէք ուղղափառ հաւատով» (էջ 119): Այն հանդիպում է նաև սրբերի մասին վկայաբանություններում, օրինակ՝ «Եւ զհաւատոց **բարուք նախանձն** նախանձեալ՝ ասէ ի սրտի իւրում («Վկայաբանութիւն սրբոյն Յիզոտիբուզտեայ», էջ 461)⁸:

Բարի նախանձ ԴՄ-ն ԳԴԲ-ն չի վկայում, բայց տալիս է **«նախանձ բարույ ի մէջ առնուլ»** բարի նախանձով լցվել (ԳԴԲ, էջ 218) միավորը:

Բնագրում գործածված է **նախանձաւոր լինել** միավորը, որը հոմանիշ է **նախանձախնդիր լինել** ԴՄ-ին և նշանակում է հետամուտ լինել: Վերջինս վկայված է ԳԴԲ-ում: **Նախանձաւոր լինել**-ը, մեր կարծիքով, նույնպես ԴՄ է: Բերենք բնագրային օրինակը. «Արդ պարտ է պատուականութեանդ ձերում **նախանձաւոր լինել** ճշմարիտ հաւատոյ հարցն» (էջ 508), այլև՝ «այլ **նախանձախնդիր լինել** գործոյ Աստուծոյ եւ հոգւոց փրկութեան» (էջ 418):

Բարկեն Ոթմսեցին սուրբ հայրերին անվանում է **«առաքինի մշակք»**, «որոց ստուգիւ զհետ զնացեալ արդարութեան հալածեցին զստութիւն» (էջ 123), ուստի **«դուռն ողորմութեան** Աստուծոյ» հանապազ բաց է նրանց առաջ, ովքեր «ընդ բազում աշխատութեամբ **զանձինս արկեալ** առ ի գտանել զճշմարիտ եւ զուղղափառ հաւատ Սրբոյ Երրորդութեան» (էջ 118):

⁷ Աշխատանքում օգտվել ենք հետևյալ բառարաններից՝ **Ռ. Ղազարեան**, «Գրաբարի դարձուածաբանական բառարան» (Եր., 2012), այսուհետ՝ ԳԴԲ; **Ռ. Ղազարեան**, Գրաբարի բառարան (հ. Ա, Եր., 2000, հ. Բ, Եր., 2000, այսուհետ՝ ԳԲԱ, ԳԲԲ); «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. Ա (Եր., 1976), հ. Բ (Եր., 1981), այսուհետ՝ ՆՀԲ; **Լ. Հովհաննիսյան**, Նոր Հայկազեան բառարանում չվկայված բառեր, Եր., 2010:

⁸ Այս փոքրիկ վկայաբանությունում կան ԴՄ-ների հետաքրքիր գործածություններ, օրինակ **պարապել յունկնդրութիւն** միավորը, որը ԳԴԲ-ն չի վկայում: *Պարապել* նշանակում է *զբաղվել*: Կապակցությունը նշանակում է **հետևել**. «...**պարապելով յունկնդրութիւն** Գրոց սրբոց...» (էջ 461):

Այստեղ կարևորվում է Աստվածային ճշմարիտ խոսքի իմացությունը, քանի որ «ազգ մարդկան **տարագիր եղեւ** յաստուածայնիցն բարեացն» (էջ 122)՝ Քրիստոսի ճշմարիտ խոսքի «կոյր» մեկնության պատճառով, որ անում են հերձվածողները:

Ընդգծված ԴՄ-ներից ԳԴԲ-ն վկայում է միայն **տարագիր լինելը՝ վտարվել** իմաստով: **Զանձինս արկանել** կապակցությունը նշանակում է *նվիրվել* և պահանջում է տրականով խնդիր (օրինակ՝ գանձինս արկանել գործոյ առաքինւոյ): Այն ԳԴԲ-ն չի վկայում: *Մշակ* բառն ունի *աշխատավոր* իմաստը. դավանաբանական նյութերում այն *բարի, առաքինի, հաւատարիմ* բառերի հետ կազմում է ԴՄ-ներ՝ *Քրիստոսի վարդապետության քարոզիչներ, Աստծու ծառաներ* իմաստով: Ունի նաև ընդհանրական իմաստ՝ *որևէ ճիշտ գործի նվիրյալ* նշանակությամբ. դրանով կազմված ԴՄ-ների օրինակներ ունենք արդի հայերենում ևս: «Ընդ որոց եղիցի լսել եւ զբարբառն հրաւիրական թէ **Բարի մշակ** եւ **հաւատարիմ**, հանդերձ ընդ քեզ սաստարիչ բարեկամաւքդ եւ փրկեալ գնդաւք, ե կ, մո՛տ յուրախութիւն Տեառն» (էջ 474):

Մշակ բառը զուգորդվում է նաև այլ բաղադրիչներով՝ ձևավորելով հակադիր իմաստով միավորներ՝ «ի բաց կացեք յինէն ամենայն **մշակդ անիրաւութեան**, զի ոչ գիտեմ զձեզ» (էջ 529): «Վասնզի այնպիսիքն գողք են եւ աւազակք եւ **գայլք յափշտակողք** եւ դարձեալ սուտ առաքեալք եւ **մշակք նենգաւորք** եւ **կերպարանին զգեստիւք** ոչխարաց» (էջ 529):

Ընդգծված կապակցությունները բնորոշում են հերձվածողներին:

«**Դուռն ողորմութեան**» կապակցությունն ունի *Աստծու ողորմածություն* իմաստը: Փոխաբերական իմաստով է գործածված *դուռն* բառը:

Հերձվածողների ուսմունքը թղթերում բնորոշվում է իբրև **խմոր չարութեան**: Այսպես՝ «Իսկ ի ժամանակին յայնմիկ երեւեցաւ **խմոր չարութեանն**, որ էր ծածկեալ յանձին անսուրբս, որք եւ սկսան այնուհետեւ պղտորել զյստակ հաւատ ճշմարիտ Երրորդութեանն» (էջ 128): *Խմոր* բառի համար ԳԲԱ-ում նշվում են *հանգամանք, իրողություն*, իսկ *խմորել* բայի համար՝ *ազդեցություն ունենալ* փոխաբերական իմաստները: ՆՀԲ-ն խմոր բառի համար վկայում է. «Լայնաբար ասի... և նմանութեամբ... **զխառնակ վարդապետութենէ**» (ՆՀԲ, հ. 1, էջ 949) և բերում է բազմաթիվ օրինակներ, ի թիվս նրանց. «Չոյշ լերուք ի խմորոյ սաղուկեցուցն և փարիսեցուց: Սրբեցեք ի բաց զհին խմորն» ևն: ԳԴԲ-ն այն չի վկայում:

Թղթերում հաճախադեպ են կրկնությունները՝ բառացի կամ որոշ փոփոխություններով, հետևաբար ԴՄ-ները ևս դրանցում կրկնվում են նույնությամբ կամ մասնակի փոփոխություններով: Օրինակ՝ Բարկեն կաթողիկոսի թղթերին բովանդակությամբ ուղղակիորեն առնչվում են Հովհաննես Գաբրելենացու (Գաբրելենեան) թղթերը՝ ուղղված Սյունիքի եպիսկոպոսին և Աբասին՝ Աղվանից կաթողիկոսին:

Հովհաննես Գաբրելենացին կաթողիկոսական աթոռը զբաղեցրել է 557-574 թթ.: Նա շարունակում է Բագրևանդացի հայրապետի հակա-

նեստորական պայքարը, քանի որ «հերձուածողք էին նաև ի Սիւնիս»: Նրա թղթերում կան կրկնվող կամ բովանդակությամբ նման հատվածներ, ուստիև ԴՄ-ները ևս կրկնված են, օրինակ՝ «...երեւեցաւ **խմոր չարութեան** եւ յաշխարհիս մերում» (էջ 445):

ԴՄ-ները թղթերում անմիջականորեն կապված են շարադրանքի բովանդակությանը, օրինակ՝ **խրամատել գսահմանս, խզել զընթացս** կապակցություններն ունեն *քանդել, ոչնչացնել* իմաստները, ինչը պայմանավորված է կոնկրետ նյութի բովանդակությամբ: Բնականաբար դրանք վկայված չեն ԳԴԲ-ում:

Խրամատել բայի համար ԳԴՄ-ում նշվում են *քանդել, վերացնել* փոխաբերական, *խզել* բայի համար՝ *կտրել, ի չիք դարձնել* իմաստները: **Խզել զընթացս** կապակցությունը բնագրային օրինակում ունի *ոչնչացնել, դեմն առնել* նշանակությունը.

«... որ սուրբ հարքն միաբանութեամբ իւրեանց ի Նիկիա յանդիմանեալ **խզեցին զընթացս** չար խորհրդոյ նոցա» (էջ 122):

«... Զի ըստ կամաց եւ խնդրոյ ստուգութեան քրիստոնեութեան հաւատ յանձինս հաստատեցի ըստ կանոնի և գիտութեան աշխարհին Հռոմոնց եւ Հայոց, Վրաց եւ Աղուանից, եւ մի՛ վայրապար **խրամատեցի սահմանս** առ ի Քրիստոս հաւատացելոց» (էջ 118):

Փոյթ ունել յանձին ԴՄ-ն գրաբարում հաճախադեպ է և վկայված է ԳԴԲ-ում՝ *հոգ տանել* իմաստով: Բնագրում հանդիպում է հետևյալ օրինակը. «...հանապազ **փոյթ ունիմք յանձինս** ըստ կարի մերում խնդրել յԱստուծոյ գառողջութիւն եւ զխաղաղութիւն» (էջ 118): Այն հոմանիշ է *փոյթ ունել* կապակցությանը. *փոյթ* նշանակում է *հոգ, խնամք*: **Փոյթ ունել, փոյթ առնել, փոյթ դնել** միավորները, ըստ մեզ, հարադիր բայեր են, իսկ **փոյթ ունել յանձինս** կապակցությունը ԴՄ է: Համեմատենք **աղաւթս առնել** և **յաղաւթս կալ** միավորները, որոնցից առաջինը հարադիր բայ է՝ *աղոթել* իմաստով, իսկ երկրորդը ԴՄ է: Նշանակում է՝ ԴՄ-ի արժևորման համար հաշվի է առնվում նաև նրա քերականական կառուցվածքը. **յաղաւթս կալ** նշանակում է *աղոթքի մեջ լինել*, որ է՝ *աղոթել*:

Բարկեն Ոթմսեցու երկրորդ թղթում ամրապնդվում են ժողովական թղթում արտահայտված իմաստները. առանձնապես շեշտը դրվում է Քրիստոսի Աստվածածին լինելու վրա, որ «**ծնաւ ի սուրբ Կուսէ**»: Հեղինակը մեջբերումներ է անում առաքյալների խոսքերից, որոնք նույնպես եզակի գործառնությով փոխաբերություններ են և հանդիպում են նաև այլ թղթերում՝ փոքր-ինչ փոփոխված տարբերակով: Դրանք բնագրում տրված են շեղագիր. «**ծառս պտղակորոյսս իւլեալ արմատաքի, աստեղս մուրսս**, որոց վիհ խաւարին յաւիտենից պատրաստեալ մնայ» (էջ 123):

Սերսես Բագրևանդացին գործածում է հետևյալ տարբերակներով. ա) **ծառս գաւսս պտղակորոյսս**, բ) **ամպս անջրդիս**, որ վարեալ ի մրրկէ ի կորուստ, գ) **նիւթս են կիզման յաւիտենականի** (էջ 416):

Ինչպես տեսնում ենք, արդեն ունենք ստորոգումով նույնիմաստ

կառույցներ, որ դարձվածային արտահայտություններ են: Դրանք նույնակերպ գործառույթ ունեն նաև Հովհաննես Գաբրիելնացու թղթերում. «**ամպս անջրդիս**՝ վարարեալս ի մրրկէ ի կորուստ» (էջ 418), «**ծառս գաւսս պտղակորոյսս**, նիրօս կիզման յախտենականի» (էջ 418):

Նեստորականությունը ճյուղերը տարածել էր ամենուր ու կլլում էր նրանց, ովքեր «կոյրք էին մտաւք»: Սա է պատճառը, որ Ներսես Բագրևանդացին դիվանագիտական խոր իմացընկալումով հովանավորում է Հայոց եկեղեցուն դիմած ասորիներին: Նա 554 թ. Դվինում գումարում է երկրորդ ժողովը: Ժողովում սահմանվում են 37 բարենորոգչական կանոններ: Ասորիներին ուղղված թղթում կաթողիկոսը ուղղակի կոչ է անում «ամենեւին **չընդունել ի տունս**» (էջ 416) մանկությունից անիծված մարդկանց: **Եկեղեցին է տուն Աստծոյ**. տունը դավանաբանական կապակցություններում ունի *եկեղեցի* իմաստը: Նրանով կազմված կապակցությունները նս, մեր դիտարկմամբ, ԴՄ-ներ են՝ ի շարս **դուռն ողորմութեան, դեղ կենաց, բան կենաց** ևն միավորների:

Հակաճառության մեթոդով ձևավորվում են նաև հակադիր իմաստ արտահայտող ԴՄ-ներ: Այսպես՝ Քրիստոսի վարդապետությունը արտահայտվում է **Բան կենաց** հայտնի դարձվածքով, իսկ Նեստորի գաղափարախոսությունը մշտապես ուղեկցվում է **չարաթոյն, մահաբեր, չարահնար** մակդիրներով: Ունենում ենք **բանք չարաթոյն եւ մահաբեր** կապակցությունը, որից պիտի զգուշանալ, հետևաբար՝ **ի բաց մերժեցէք** ԴՄ-ը թղթերում հաճախ է գործածվում, օրինակ՝ «... նոյնպէս ի սրբոց եկեղեցոյ եւ ի ձեր հաղորդութենէ նզովիւք **ի բաց մերժեցէք**, եւ ամենայն ուղղափառաց **պատուիրեցէք** մի՛ լինել հաղորդ **անպտղութեան գործոց** նոցա եւ մի՛ լսել հրապուրող եւ **չարաթոյն բանից** նոցա **մահաբերաց**» (էջ 446):

Ինչպէս **ի բաց մերժել** ԴՄ-ն՝ *հեռանալ, փախչել* իմաստներով, այնպէս էլ *ունել* բայով արտահայտված **յանձին ունել** ԴՄ-ն վկայված են ԳԴԲ-ում: Վերջինս ունի *հանձն առնել* իմաստը, ինչը պահպանվել է նաև արևելահայերենում: Օրինակ՝ «...առաւել քան զամենայն զայդ հող **յանձին կալաք** հեռացուցանել ի ձէնջ **զչարի որոման սերմանս**» (էջ 446):

Ինչպէս թղթերում, այնպէս էլ դավանաբանական այլ նյութերում հաճախադեպ են *գայլ, ոչխար, գառն* բաղադրիչներով ԴՄ-ները: Օրինակ՝ «Յիզտիբուզիտի» փոքրիկ վկայաբանությունում գործածված է «**ոչխար ի զենումն**» ԴՄ-ն, որ ունի *գոհաբերվող ոչխար* իմաստը և խորհրդանշում է հավատացյալներին. «Արի, Տէ՛ր, աւզնեա՛ զմեզ եւ փրկեա զմեզ վասն անուանդ քո համարեցաք որպէս **գոչխար ի զենումն**» (էջ 464): **Գայլ** և **գառ** բաղադրիչներով դարձվածքային միավորները իմաստով հակադիր են: Օրինակ՝ «...եւ **գայլք յափշտակողք**, եւ դարձեալ սուտ առաքեալք եւ մշակք նենգաւորք եւ կերպարանին զգեստիւ ոչխարաց» (էջ 529): «Ահա **գառն** Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի» (էջ 453):

Մովսէս Յուրտավեցու անունով վկայված են վեց թղթեր: Նա եղել է Յուրտավի բղէշխության վիճակավոր եպիսկոպոս, որին ձեռնադրել է

Կյուրոն կաթողիկոսը: Մակայն վերջինիս հետ դավանաբանական հակամարտության պատճառով եղել է հալածական և ապաստան է գտել Արագածոտնի Սուրբ Հովհաննես Մկրտիչ վանքի երեց Բաբյուլասի մոտ (տե՛ս էջ 123): Նա նամակներ է գրում Վրթանեսին, Աբրահամ կաթողիկոսին, Մմբատ մարզպանին, Յուրտավի հայալեզու իշխաններին՝ հույս ունենալով վերացնել հակամարտությունը Կյուրոնի հետ: Հայվրացական դավանաբանական վեճը, որին մասնակցում էր նաև Մովսես եպիսկոպոսը, վճռական նշանակություն է ունենում, քանի որ այն ավարտվում է հայ և վրաց եկեղեցիների բաժանմամբ (տե՛ս էջ 469):

Հեղինակը վրաց եկեղեցու մասին ունի իր դիրքորոշումը. «Քանզի յետ յայսչափ անցնելոց ժամանակաց ապա եւս հասի ի վերայ, թէ որպէս Վիրք **զվանաչագեղ տերեւն** միայն ունէին, **ոստս առանց պտղոյ ունելով** յինքեանս, ըստ արինակի սաղարթալից թգենւոյն, յորում պտուղ ոչ եզիտ Տէրն, այլ տերեւ միայն» (էջ 478): Բայց Քաղկեդոնի ժողովից հետո այդ տերեւն էլ չկար. «Նա եւ ոչ տերեւն կանաչ գոյր ի նոսա» (էջ 471):

Նշենք, որ դավանաբանական երկերում դարձվածային արտահայտությունները հաճախ ուղեկցվում են աստվածաշնչյան համեմատություններով կամ սուրբ առաքյալների խոսքերով, վկայություններով:

Յուրտավեցու թղթերում ևս ԴՄ-ները հաճախադեպ չեն: Ներկայացնենք դրանք.

ա) **Փրայոյզ լինել՝ մեծամտանալ** իմաստով: Այն ԳԴԲ-ում վկայված չէ:

Փրալ բայի համար *մեծամտանալ*, *գոռոզանալ* իմաստները ԳԲԲ-ում նշվում են իբրև փոխաբերական իմաստներ: Բնագրային մեր օրինակում ունենք «Եւ թէ որպէս վասն խստութեան ձմերայնւոյն եւ **փքայոյզ լինելոյ** արգելեալ եղէ ի սրբոյ Մկրտչի Յովհաննու ի վանս, որ յԱրագածս ոտին եւ ընկալեալ եւ ի ձեռն երանելւոյն տեառն Բաբյուլասայ» (էջ 471):

բ) **Աշխատ լինել՝ չարչարվել** իմաստով: Այն ԳԴԲ-ում վկայված է: ԳԲԱ-ն *աշխատ* բառի համար նշում է *նեղություն*, *չարչարանք* իմաստները, որոնք այն դրսևորում է *առնել*, *լինել*, *անել* բաղադրիչների հետ և չունի ինքնուրույն գործածություն: Բնագրում առկա է «Ապա թէ ոչ ձեզ պիտի երթալ, թող զի **լինիք աշխատ...**» (էջ 472) օրինակը:

գ) **Կենաց դիպչել՝ կյանքի կոչվել** իմաստով: ԳԴԲ-ն այն չի վկայում, բնագրում ունենք «Զի ձեր ի ձեռն առնելով զիս, ահա կրկին **կենաց դիպչայ**, հոգալով զիս եւ աշխարհն որպէս արժան իսկ է» օրինակը (էջ 472):

դ) Նախդրիվ հետևյալ միավորները՝ **ի գլուխ տանել** (էջ 472)՝ *ավարտել* իմաստով, և **ի ձեռն առնուլ** (էջ 472)՝ *օգնել*, *ձեռք մեկնել* իմաստով: Սրանք վկայված են նաև ԳԴԲ-ում:

ե) **Դարձուցանել յուղղութիւն կամ յուղղութիւն դարձուցանել՝** ճիշտ ուղու վրա դնել: ԳԴԲ-ն վկայում է **յուղղութիւն ածել** միավորը՝ *շտկել* իմաստով: Սրանք հոմանիշ ԴՄ-ներ են: *Ճիշտ ուղու վրա դնել* կառույցը այսօր էլ ԴՄ է:

Դարձուցանել բաղադրիչով ունենք **դարձուցանել** **ի պարտութիւն** նախդրիվ կառույցը *պարտության մատնել* իմաստով: Ահա բնագրային օրինակը. «... ջանացարուք **դարձուցանել** զժողովուրդն ժխտող եւ զապստամբեալն **յուղղութիւն**, եւ ածել ի նոյն գաւիթ միոյ հովուի» (էջ 474):

զ) **Ի բաց ընկենուլ ի ճանապարհէն զքարինս** (էջ 474) բազմաբաղադրիչ դարձվածքը, որ նշանակում է *վերացնել խոչընդոտները*: Այն պարունակում է նս մի **ԴՄ՝ ի բաց ընկենուլ՝ ղէն նետել** իմաստով: Այսպէս՝ «... դուք, որ կարողքդ էք եւ **զքարինս ի ճանապարհէն ի բաց ընկեցէք**, զի մի՛ իւիք սայթափցեն ժողովուրդք իմ» (էջ 472), կամ «... եւ ըստ մարգարէին հրամանի՝ **զքարինս ի ճանապարհէ ի բաց ընկենուլ**, զի մի՛ որ կաղն իցէ, գլորիցի» (էջ 519):

Բնագրերում գործածված են նաև հետաքրքիր դարձվածային արտահայտություններ: Ներկայացնենք դրանք.

- «...**Ձի գայլ ոչ երբէք բնակի ի մեջ ոչխարաց**» (էջ 529):

- «Ո՛վ հովիւք, որ **կորուսէք եւ ցրուեցէք զոչխարս արաւտի իմոյ**, արդ ահաւասիկ եւ վրէժ առից ի ձէնջ զի լցան ատուրք ձեր ի հողհողումն» (էջ 470):

- Հետաքրքիր օրինակի ենք հանդիպում Վրթանես Քերթողի թղթերում: Վերջինս մերժում է Բյուզանդիայում տարածված «տերունական պատկերազրութեան թոյլատրելիութիւնը»: Նրա շարադրանքը այդ մասին է: «... **Եւ առանց մտաց աչաց մարմնոյ, աչք կուրացեալ գտանին**» (էջ 489), - գրում է հեղինակը (էջ 495): ԴՄ-ները սակավադեպ են նաև նրա թղթերում:

- Ամենագետ ուսուցիչներին, որոնք են եպիսկոպոսները և երեցները, տրվում են որոշակի հրամաններ. ա) «...**Ճախելով զմարմին՝ ի հոգին յաւելուլ**» (էջ 477) (քրիստոնեական վարդապետության ամրապնդման համար հոգեկան ամրություն է պետք, ինչը ֆիզիկական ջանքեր է պահանջում), բ) «**զգայլսն հալածելով ի գահավիժութենէ զփարախն պահել...**» (էջ 477) (հերձվածողներին հալածելով՝ փարախը (նկատի ունի ճշմարիտ վարդապետության հավատացյալներին) պահպանել և պաշտպանել կործանումից):

- «Ապա թէ վասն բազում մեղաց զհակառակսն եւ զընդդէմսն հասանէ լսել, **զփոշի ոտից մերոց** ի նոսա **թոթափենք**, եւ յաղագս այդր պատճառի է, զի անմեղադրելիք յԱստուծոյ եւ ի մարդկանէ լինիմք» (էջ 510):

ԴՄ-ները, ըստ կապակցության գլխավոր բաղադրիչի խոսքիմասային պատկանելության, անվանական և բայական կառույցներ են, որոնց ամբողջական ցանկը կներկայացնենք առաջիկայում՝ հրատարակության պատրաստվող գրաբարի դարձվածքաբանության իմաստակառուցվածքային և ոճական քննությանը նվիրված աշխատության մեջ իբրև հավելված:

Այսպիսով, դավանաբանական թղթերը՝ գրված «ի կաթողիկոսաց», ունեն ոչ միայն դավանաբանական, այլև պատմական արժեք: Դրան-

ցում արտահայտվում են քրիստոնեական վարդապետության հիմքային մեկնություն, հերձվածողների մտքերի ժխտում, որը կատարվում է տրամաբանական-դատողական ապացույցների, դրանց բացատրությունների շարունակական աշխատանքով, քանի որ հավատացյալներից անտեղյակներին ի հարկի պիտի զինել ճշգրիտ քարոզչությամբ «ի բաց մերժելով» ցանկացած մոլար գաղափար: ԴՄ-ները այստեղ հաճախադեպ չեն: Դրանց մեծ մասի գործածությունը պայմանավորված է թղթի բովանդակությամբ, այսինքն խոսքային առկայացմամբ:

Կաթողիկոսների թղթերը պաշտոնական գրություններ են, որոնցում ընդգծված է հայ եկեղեցու կոշտ վերաբերմունքը նեստորականության և քաղկեդոնականության դեմ: Դրանք անդրադառնում են նաև հայ-վրացական դավանաբանական վեճին, որն ավարտվում է հայ և վրաց եկեղեցիների բաժանմամբ: Այս առիթով գրված նամակները, շրջագայականները արժեքավոր են նաև այն բանով, որ դրանց մի մասի հայերեն տարբերակներն են միայն պահպանված:

Ուսումնասիրելով Բաբկեն Ոթմսեցու, Ներսես Բագրևանդացու, Հովհաննես Գաբեղենացու, Մովսես Յուրտավեցու, Մովսես Եղիվարդեցու, Վրթանես Քերթոզի թղթերը և շրջագայականները տեսնում ենք, որ դրանցում դարձվածքները հաճախադեպ չեն, ինչպես վարքագրություններում և վկայաբանություններում: Գործածված 62 ԴՄ-ներից, 29-ը անվանական միավորներ են, 45-ը վկայված չեն ԳԴԲ-ում. օրինակներ *նախանձ խանտանաց, վէմ հաւատոյ, սրտի պակասութիւն, պարապել յունկնդրութիւն, պատրել ի մոլորութիւն, փքայոյց լինել, խրամատել գսահմանս, կենաց դիպչել* (կյանքի կոչվել), *վրիպեցուցանել ի ճանապարհէ*, որին հոմանիշ է *դարձուցանել յուղղութիւն, նախանձաւոր լինել*, որին հոմանիշ է *նախանձախնդիր լինել, չարաթոյն բանք*, որ հականիշ է *բան կենաց* դարձվածքին, *տունկ բարեպտուղ*, որ հոմանիշ է *սերմն բարոյ պտոյ, դնել զանձն* (նվիրվել), որին հոմանիշ է *զանձինս արկանել* ԴՄ ևն: Կառուցվածքային առումով տիրապետող են երկբաղադրիչ դարձվածքները: Բազմաբաղադրիչ դարձվածքները, որոնց մեջ ենք ընդգրկել նաև նախդրիվ կառույցները, հաճախ ձևավորվում են երկբաղադրիչ միավորին որևէ բառի հավելումով, օրինակ՝ *ի բաց ընկենուլ + զքարինս + ի ճանապարհէ* կամ՝ *որումն չարի և սերմանք որուման չարի, վրիպեցուցանել ի ճանապարհէ + զկոյրս* ևն:

Թղթերը գրված են հակաճառության մեթոդով, ուստի և դրանցում գործածվում են հակադիր իմաստով դարձվածքներ, օրինակ՝ *զառն Աստուծոյ և գայլք յափշտակողք, մշակ առաքինի և մշակ նենգաւոր* ևն: Հաճախադեպ են նաև հոմանիշ դարձվածքները, ինչպես՝ *կուրացուցանել զմիտս և պատրել ի մոլորութիւն, նախանձ խանտանաց և բարի նախանձ* ևն:

VI-VII դարերի դավանաբանական թղթերում տեղ գտած դարձվածքների իմաստագործառական և ոճական քննությունը կարևորվում

է գրաբարի դարձվածքների՝ պաշտոնական ոճի երկերի լեզվում դրսևորած առանձնահատկությունների գնահատման դիտակետում: Մեր կողմից առաջին անգամ ներկայացված դարձվածքները կարևոր նյութ են ի լրումն գրաբարի դարձվածքների շտեմարանի:

Բանալի բառեր – *նավանաբանական թղթեր, նեստորականություն և քաղկեդոնականություն, դարձվածքի ոճական գործառույթ, երկբաղադրյալ և բազմաբաղադրյալ դարձվածքներ, քրիստոնեական վարդապետություն, հակաճառության մեթոդ, վարքագրություն և վկայաբանություն, դարձվածքային արտահայտություն, անվանական և բայական դարձվածքներ*

АННА АБАДЖЯН, АНАИТ ЮЗБАШЯН – Фразеологические единицы в доктринальных бумагах. – Доктринальные, официальные документы выражают резкое отношение Армянской церкви к несторианству и халкидонизму. Армянские иерархи VI-VII вв. затрагивали также армяно-грузинский доктринальный спор, окончившийся разделением двух церквей. Материалы, разобранные в статье, обладают несомненной исторической ценностью, ибо до нас дошли только немногие. Их семантическая, структурная и стилистическая экспертиза важна в силу присущего им официального стиля. Из 62 выражений, использованных здесь, 45 засвидетельствованы в «Богословском словаре грабара» Р. Казаряна.

Ключевые слова: *доктринальные статьи, несторианство и халкидонизм, стилистическая функция фразы, двухкомпонентные и многокомпонентные фразы, христианское учение, метод противоречия, фразеологическое выражение, именные и словесные выражения*

ANNA ABAJYAN, ANAHIT YUZBASHYAN – Phraseological Units in Doctrinal Papers. – Doctrinal papers are official documents expressing the harsh attitude of the Armenian Church against Nestorianism and Chalcedonism. Catholicos of VI-VII centuries also touched upon the Armenian-Georgian doctrinal dispute, which ends with the separation of Armenian and Georgian churches. The papers which we have studied have historical value. Only some of the Armenian versions have survived. The semantic, structural, and stylistic examination of the expressions used in them is important because of the official style of the language used in Grabar's expressions. From the 62 expressions used in them, 45 are attested in R. Ghazaryan's "Theological Dictionary of Grabar".

The work also examines the language of the papers, as most of the expressions are distinguished by the features shown in that paper.

Key words: *doctrinal papers, Nestorianism and Chalcedonism, stylistic function of the phrase, two-component and multi-component phrases, Christian doctrine, method of contradiction, phraseological expression, nominal and verbal expressions*

Ներկայացվել է՝ 10.12.2019

Գրախոսվել է՝ 20.02.2020

Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020